ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԻՐԱՆԻ ՇԱՀԻՆՇԱՀ ՆՈՐԻՆ ՎԱՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻԻՆ ՆՈՎՐՈՒԶԻ (ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ) ԱՌԹԻՎ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ ՎԱՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻԻՆ, ՎԱՍԵՄԱՇՈՒՔ ՇԱՀԻՆՇԱՀԻՆ ԻՐԱՆԻ

ԹԵՀՐԱՆ

Մենք, Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, իբրև նորընտիր Հայրապետ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցվո, Նովրուզի Ձեր մեծ տոնի առթիվ երջանիկ ենք հղելու Ձերդ Վսեմության Մեր ողջույնը և օրհնությունը հայ ժողովրդի հավատի կենտրոն Սուրբ Էջմիածնից:

Շնորհավորելով Ձերդ Վսեմության նոր տարին, Մենք աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ Ձեր փառապանծ երկիրը միշտ մնա խաղաղ ու անվրդով, շեն ու բարգավաճ Ձեր վեհիրավ իշխանության ներքո երկա՜ր-երկա՜ր տարիներ: Թող Ձեր Գահը անսասան մնա և Ձերդ Վսեմությունը բաջաղող ու երջանիկ մինչև խոր ծերություն:

Երանի՜ լիներ մի օր, երբ Մենք առիթն ունենայինք Մեր ողջույնը և հայրապետական օրհնությունը անձամբ տալու Ձերդ Վսեմությանը և Ձեր արևոտ երկրին՝ հինավուրց բայց վերածնված Իրանին:

Ողորմածությամբ Արարիչն Աստված տա Ձեզ ուժ և կարողություն, արեշատություն և խաղաղություն, ամեն:

Ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

20 մարտի 1958 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա, ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձեր բարեմաղթություններր Նովրուզի տոնի առթիվ ինձ խորապես հուզեցին: Հայտնում եմ Ձեզ երջանկության, երկարակեցության և հաջողության իմ մաղթանքներր Ձեր նոր աշխատանքում:

Իրանի հայերը ինձ համար բանկագին են. ես նրանց նվիրում եմ իմ ամբողջ հոգածությունը:

ՄՈՒՀԱՄԵԴ ՌԻԶԱ ՓԵՀԼԵՎԻ
ՇԱՀԻՆՇԱՀ ԻՐԱՆԻ

26 մարտի 1958 թ.
ԹԵՀՐԱՆ